# ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, ԺԲ հատոր, խմբագիր՝ Երուանդ Փամպուքեան, Պէյրութ, «Համազգայինի Վահէ Սէթեան հրատարակչատուն», 2016, 464 էջ*:

**Բանալի բառեր** – փաստաթղթեր, «Վիշապի առժամեայ մարմին», Հովհաննես Սերենկյուլյան, Շավարշ Միսակյան, դատավոր, Միւսալեռ, Ստոկհոլմ, Ռոստոմ:

Փաստաթղթերի ժողովածուին գրախոսական անդրադարձ կատարելու խնդիրը միշտ էլ կապված է որոշակի բարդությունների հետ, քանզի նման հրապարակման աղբյուրագիտական արժեքի բացահայտումը դեռևս բավարար չէ այն կազմող հեղինակի կատարած գործի ամբողջական արժևորման համար:

Մեծ եղեռնի ողբերգական իրադարձությունների վերաբերյալ հրատարակված որոշ ժողովածուներում հաճախ վավերագրերի այնպիսի մեծ ծավալ է ավելացվել առանց այդ էլ պարզ ու հստակ կերպով ապացուցված պատմական իրողության հյուսվածքին, որ դրանք սոսկ մանրամասնելով տեղի ունեցած հանցագործության առանձին դրվագները, մեծապես բարդացրել են «թփերի ու մացառների» հետևում «անտառը» տեսնելու, այսինքն՝ պատմագիտությանն անհրաժեշտ հայեցակարգային հստակեցումներ կատարելու խնդիրը:

Երվանդ Փամբուկյանի կազմած փաստաթղթերի ժողովածուն, որը ՀՅԴ գործունեության վավերագրերը ներառող «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան» 12-րդ հատորն է, սկզբունքորեն տարբերվում է նման հրապարակումներից: Ներկայացվող վավերագրերը լինելով 20-րդ դարասկզբի հայության կյանքում առանցքային դերակատարություն ունեցած կուսակցության գործունեության արդյունքը, միաժամանակ առանձնահատուկ արժեք ու նշանակություն ունեն Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության համատեքստում: Դրանք կուսակցական խողովակներով հավաքված ու արտասահման ուղարկված այն փաստաթղթային ապացույցներն են, որոնք սկզբում կոչված էին կանխարգելիչ դեր խաղալու շարունակվող ցեղասպանության հետագա ծավալման ճանապարհին, իսկ հետագայում ծառայելու իբրև ապացույցներ՝ Թուրքիայի պատասխանատվության կանչելու համար: Այսինքն՝ դրանք այն երկու համաժամանակյա «տեսաշարերն» էին, որոնցից առաջինում արձանագրված հանցագոր-

*Ընդունվել է տպագրության 20.12.2015:

ծության փաստերը, երկրորդում կոնկրետ բողոքների ու հայտարարությունների վերածվելուց առաջ իրենց մեջ էին ներառել կուսակցական խողովակներով ստացվող և աստիճանաբար բյուրեղացող տեղեկատվական հոսքի ողջ հարստությունը: Ուստի բնական է, որ ցեղասպանության կանխման ու դրա համար պատժի սահմանման մեջ շահագրգիռ ուժի հետաքրքրությունների դաշտում էր հայտնվել ոչ միայն խնդրի ավելի քան ակնհայտ՝ քրեական կողմը, այլ նաև հանցագործության խորքային շարժառիթները վերհանելու առաջադրանքը: Որովհետև տվյալ պատմաշրջանում ՀՅԴ-ն ոչ միայն ծավալվող դիմակայության կողմերից մեկն էր, այլև դրա հետագա ընթացքը պարզելու մեջ շահագրգիռ ուժը:

Նման ողբերգական տեսաշարը ներկայացնող, վերլուծող և ապա դրա հիման վրա միջազգային ասպարեզում քայլերի դիմող կուսակցության հավաքած նյութերի կարևորությունն ավելի բարձր է ցանկացած եղելության հավաստիությունն ապացուցող վավերագրերից, քանզի իր մեջ պարունակում է ոչ միայն «ինչպես է եղել իրականում»-ը հերթական անգամ հավաստելու հնարավորություն, այլև, որ ավելի կարևոր է՝ «ինչո՞ւ է եղել այդպես»-ն ըմբռնելու և բացատրելու հայեցակարգային մեկնակետեր, որոնք հետագայում ուղենշային նշանակություն ունեցան հայ պատմագրության համար:

Հայոց ցեղասպանության հենց առաջին օրերից իրադարձությունների ընթացքին հետևող ՀՅԴ ղեկավար դեմքերը գիտակցում էին, որ իրենք գործ ունեն այնպիսի Մեծ աղետի[1] հետ, որը ժամանակի ընթացքում այդպես էլ պարզ եղելություն չի դառնալու, այլ իր մեջ պարունակելու է տեղի ունեցածի քննության կամ հետաքննության խնդիրը: Իսկ պատմությունն ի սկզբանե՝ «ἱστορία» բառի նախնական իմաստով, հենց դա է ենթադրում:

Եվ այս պատճառով միանգամայն բնական է, որ գրախոսվող հատորի մեջ հրապարակված վավերագրերն ամբաստանագրերի դեր խաղալով՝ ոչ թե վնասել, այլ նպաստել են անցյալի ամբողջական պատկերի վերականգնման ճանաչողական առաջադրանքին: Որովհետև դրանց միջոցով հնարավորություն է ստեղծվել թափանցելու տեղի ունեցող հանցագործության ո՛չ միշտ տեսանելի խորքերը, որոնք հասու էին միայն իթթիհատական մարդակերների հետ մահացու դիմակայության մեջ հայտնված ՀՅԴ ղեկավար դեմքերին:

Այս առումով ուշարժան է ցեղասպանության սկսվելուց անմիջապես հետո ձևավորված «Վիշապի առժամեայ մարմնի» կողմից 1915 թ. մայիսի 13-ին Բալկանների կենտրոնական կոմիտեին ուղղված հերթական գրության մեջ արձանագրված հետևյալ դրվագը: Դեռևս ազատության մեջ գտնվող Հովհաննես Սերենկյուլյանը (Վարդգես կամ Գիսակ) նախօրեին կարողացել էր հանդիպել անձամբ Թալեաթ փաշային, որը բացեիբաց հայտարարել էր. «**Քանի որ դուք մեր նեղ օրերուն մեր վզին չոքելով, բարենորոգում, ինքնավարութիւն, և այլն պահանջեցիք, հիմա մենք ալ մեր լայն օրերուն հայ ժողովուրդը ցիրուցան պիտի ընենք, որպէսզի մինչև 50 տարի բարենորոգման կամ ինքնավարութեան խօսք**

---

1 Սկզբում հենց այս հասկացությամբ էին բնորոշվում 1915-ի ապրիլի 11 (24-ին) սկսված ողբերգական իրադարձությունները:

**չկարենաք ըսել...»**[2] (ընդգծումը մերն է – Գ. Խ.): «Վիշապի առժամեայ մարմնի» հաջորդ գրություններից ակնհայտ էր դառնում նաև, որ «**Թա-լէաթը նոյն իմաստով խօսած է նաև ամերիկեան դեսպանին, այսինքն ամէն բան պիտի ընենք մինչև որ 50 տարի հայերուն խեղքը գլուխը չգայ**[3]»:

Հասկանալի է, որ դեռևս 1912–1914 թթ. բարենորոգումների շրջանում առարկայացած երիտթուրքերի հանցավոր մտադրության՝ intent-ի մասին վկայող նման խոսակցությունների տարբեր դրվագներն իր հուշերում ար-ձանագրել է նաև Թուրքիայում ԱՄՆ դեսպան Հ. Մորգենթաուն[4]:

Ընդհատակում գործող ՀՅԴ «Վիշապի առժամեայ մարմնի»՝ Բալկան-ների կենտրոնական կոմիտեին ուղարկած գրություններում և ԱՄՆ դես-պանի հուշերում արձանագրված նույնիմաստ վկայությունների առկայու-թյան փաստը բավարար է՝ պարզելու համար Հայոց ցեղասպանության իրականացման երիտթուրքերի հանցավոր մտադրությունն ու նրա առար-կայացման ժամկետները, որոնք ավելի ուշ շրջանում հաստատվեցին վեր-ջիններիս սալոնիկյան հավաքների մասին տեղեկատվությամբ: Երկու ժողովուրդների հարաբերությունների ամենաճակատագրական պահին ի հայտ եկած նույն իրադարձության հայկական (Վարդգես), թուրքական (Թալեաթ) և ամերիկյան (Հ. Մորգենթաու) ընկալումների տարանջատումը պատմական իրականությունից և դրանց հակադրումը մեկը՝ մյուսին դա-սական պատմագիտության բոլոր չափորոշիչներով[5] ապահովում է անց-յալի եղելության փոխակերպումը **գիտապատմական փաստի**, որում այլևս գոյություն չունի տվյալ իրադարձության հավաստիությունը հաստա-կեցնելու խնդիրը, այլ սոսկ պատմական ճշմարտության արտացոլման **դիտանկյունների** տարբերությունը:

Պատահականություն չէ նաև թուրք գլխավոր ցեղասպանի՝ հայ ժո-ղովրդին սեփական իրավունքների համար պայքարի ասպարեզից 50 տարով դուրս մղելու մտադրության ճշգրիտ համընկնումը 1965-ին սկիզբ առած պահանջատիրական շարժման ժամկետների հետ: Մեծ հաշվով՝ թուրքական չար հանճարի կանխատեսումն իրականություն դարձավ՝ բա-ցահայտելով նաև այն իրողությունը, որ ժամանակն ի զորու չէ պահպա-նելու անգամ 50-ամյա հարաբերական լռությամբ կարծրացած պատը, ինչի ականատեսն ենք մենք այսօր:

Ուստի պատահական չէ, որ հենց այդ շրջանից սկսած ու մանավանդ՝ Հայաստանի անկախացումից հետո Թուրքիայի պետական շրջանակները և նրանց հանձնարարությունը կատարող պատմաբանները ջանք ու եռանդ չէին խնայում Բոստոնում պահվող ՀՅԴ Կենտրոնական արխիվներ թափանցելու և դրանց բովանդակությանը հասու լինելու համար: Պատ-ճառն այն է, որ նրանք գիտեին ՀՅԴ-ի ջանքերով ժամանակին արտա-

2 Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար, ԺԲ հատոր, խմբագիր՝ **Երուանդ Փամպու-քեան**, Պէյրութ, 2016, էջ 47:

3 Նույն տեղում, էջ 57:

4 Թալեաթի և Մորգենթաուի խոսակցությունները տե՛ս **Morgenthau H.** Ambassador Morgenthau's story. Plandome, New York, «New age publishers», 1975, էջ 326–343:

5 Ավելի մանրամասն տե՛ս **Գևորգ Ս. Խուդինյան**, Պատմության գաղափարը Յոհան Դրոյզենից մինչև Ռոբին Քոլինգվուդ: Մաս առաջին: Յոհան Դրոյզենը և նրա «Իստորիկան», «Վէմ», 2014, N 2:

սահման ուղարկված վավերագրերի գոյության մասին և իրենց համար լուրջ վտանգ էին տեսնում հայ իրականության մեջ առաջատար ուժի հավաքած այդ փաստաթղթերի մեջ: Առավել ևս, որ ի տարբերություն Թալեաթ փաշայի 1918 թվականի փախուստի օրերից հետևողականորեն ոչնչացված իթթիհատի վավերագրերի՝ դրանց մի մասը ժամանակին քաղվածաբար հրապարակվել էր Սոֆիայում լույս տեսնող «Հայաստան» թերթի էջերում, իսկ հետագայում էլ մեկնաբանվել ՀՅԴ «Վիշապի առժամեայ մարմնի» առանցքային անդամ Շավարշ Միսակյանի հրապարակումներում ու նրա մասին գրված աշխատություններում[6]:

Ուրեմն Երվանդ Փամբուկյանի կողմից հրապարակված ՀՅԴ պատմության վավերագրերի հերթական հատորի բովանդակությունը գալիս է լրացնելու այն բացը, որը Հայոց պահանջատիրության նոր մեկնակետ 1965-ականից հետո Հայաստանում սկիզբ առած Մեծ եղեռնի պատմության վավերագրերի գիտական հրապարակման արդյունքում առաջ էր եկել հայ պատմագիտության մեջ: Այդ տարիներից սկսած՝ մեր պատմաբանների համար հասու են եղել հիմնականում Կովկասում ու արտասահմանի մի շարք երկրներում (Ռուսաստան, Գերմանիա, Ավստրիա և այլն) հանգրվանած փաստաթղթերը: Իսկ դրանց այն շերտը, որը ՀՅԴ ջանքերով ժամանակին ձեռք էր բերվել Մեծ եղեռնի տարբեր թատերաբեմերից և ի վերջո հանգրվանել էր կուսակցության արխիվներում, իր ամբողջության մեջ մնացել էր անհասանելի՝ մասնագետ հետազոտողների համար:

Շնորհիվ Երվանդ Փամբուկյանի կատարած հսկայածավալ աղբյուրագիտական աշխատանքի՝ դրանք այժմ ընթերցողի դատին են ներկայացվել որոշակի բաժիններով և յուրաքանչյուրին կցված համապատասխան բացատրականներով:

**Ա. բաժինը**, որը զբաղեցնում է գրախոսվող փաստաթղթերի ժողովածուի մոտավորապես կեսը, ՀՅԴ Հայաստանի Բյուրոյի Կ. Պոլսի հատվածի ու Կ. Պոլսի կենտրոնական կոմիտեի անդամների ձերբակալությունից հետո ընդհատակում ձևավորված «Վիշապի առժամեայ մարմնի» ջանքերով հավաքված ու դեռևս պատերազմի մեջ չգտնվող Բուլղարիա ուղարկված վավերագրերն են, որոնց մեծ մասը գաղտնի զեկուցագրեր են: Մինչև այդ մարմնի առանցքային դեմքի՝ Շավարշ Միսակյանի ձերբակալությունը 1916 թվականի մարտի 16-ին, փաստաթղթերի հոսքը դեպի Բուլղարիա, իսկ վերջինիս պատերազմի մեջ մտնելուց հետո՝ դեպի Ռումինիա, շարունակվել է և հիշյալ երկրներից առաքվել հիմնականում Ժնև ու Կովկաս: Սկսվելով Մեծ եղեռնի սկզբնավորումից՝ ապրիլի 11-ից (նոր տոմարով՝ 24-ից) ընդամենը 3 օր անց, տեղեկատվության այդ հոսքը, որն ապահովվում էր հիմնականում կասկածից դուրս գտնվող տարբեր օրիորդների հասցեներով շաբաթը մի քանի անգամ ուղարկվող ու հետ ստացվող նամակների և պատասխան գրությունների միջոցով, Բալկանների ԿԿ-ն վերծանել, բազմացրել ու տարածել է՝ զուգահեռաբար ՀՅԴ գերադաս մարմինների տեղեկություններն ու հրահանգներն ուղարկելով «Վիշապի

---

6 Դրանցից վերջինը, թերևս, մեր հանդեսում հրատարակված՝ Գրիգոր Յ. Պըլտեանի ուսումնասիրությունն է՝ Շավարշ Միսակյանի հուշերի վերաբերյալ: Տես **Պըլտեան Գրիգոր Յ.**, Պակող բառը: Նախքան ցեղասպանութեան յղացքի մշակումը, «Վէմ», 2015, N 2 (50), Թեմատիկ համար:

առժամեայ մարմնին»: Կ. Պոլսից արտասահման առաքված այս ուշագրավ վավերագրերի շարքում առկա են նաև Արևմտյան Հայաստանից ու կայսրության տարբեր հայաբնակ վայրերից ուղարկված մեծաթիվ փակ տեղեկագիր-հաշվետվություններ՝ ցեղասպանության սկզբնավորման, առաջին ինքնապաշտպանական մարտերի և այլ իրադարձությունների մասին: Վերջիններս նույնպես հստակորեն ապացուցում են Հայոց ցեղասպանության ծրագրված լինելը՝ դեռևս մինչև Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը սկիզբ առած սադրանքների, «հայկական ապստամբության» վերաբերյալ կեղծ լուրերի տարածման և անգամ առանձին վայրերում կազմակերպված «փորձնական» կոտորածների մասին փաստերով:

**Բ. բաժինը**, որը վերնագրված է «Մուսալեռցիները Եգիպտոսի մէջ», ուշագրավ փաստեր է պարունակում ինչպես ՀՅԴ Եգիպտոսի կոմիտեի, այնպես էլ Մուսալեռի գոյամարտից հետո այդ երկրում ապաստանած ՀՅԴ «Կարմիր լեռ» ենթակոմիտեի գործունեության վերաբերյալ: Վերջինիս կողմից ՀՅԴ Արևելյան Բյուրոյին ուղարկված տեղեկագիրը մանրամասնորեն ներկայացնում է Մուսա լեռան հերոսամարտի նախապատրաստման, զենքի ու զինամթերքի ձեռքբերման ու ռազմական գործողությունների ծավալման ընթացքը և նոր միայն գիտական շրջանառության մեջ դրվող առարկայական փաստերով լուսաբանում է ՀՅ Դաշնակցության վճռական դերն այդ գործում:

**Գ. բաժինը** ներառում է 1917 թվականին Ստոկհոլմում կայացած Սոցիալիստական ինտերնացիոնալի կոնֆերանսի հետ կապված նյութերը: Ստոկհոլմում ՀՅԴ-ն ներկայացրած Ռուստոմի կողմից կոնֆերանսին մատուցված ընդարձակ «Տեղեկագիրը» Մեծ եղեռնին նախորդած իրադարձությունների, Եղեռնի պատճառների, ընթացքի, ինչպես նաև դրա հետևանքների հաղթահարման վերաբերյալ առաջարկությունների առաջին շատ թե քիչ ամբողջական փաստաթուղթն է, որը «Նիւթեր»-ի ընթերցողին է մատուցվել իր ֆրանսերեն բնագրին զուգահեռ կատարված հայերեն թարգմանությամբ: Առաջին անգամ այս փաստաթղթի միջոցով միջազգային հեղինակավոր կազմակերպության բեմից ՀՅԴ-ն առաջ է քաշել ու հիմնավորել արևմտահայության բնաջնջման համար Թուրքիայի՝ իբրև պետության, պատասխանատվության հարցը: Դա շատ կարևոր էր այն պատճառով, որ համաշխարհային պատերազմը մոտենում էր ավարտին, իսկ 1915-ի մայիսի 24-ից սկսած՝ դաշնակիցների հայտարարութեններում ձևակերպված երիտթուրք պարագլուխների պատասխանատվության խնդիրը երկակի մեկնաբանության էր արժանանում: Պատահական չէ, որ հետագայում՝ Մուդրոսի զինադադարից հետո ու մանավանդ երիտթուրք պարագլուխների Կ. Պոլսի դատավարության ընթացքում, իշխանության ղեկին գտնվող իթիլաֆականների կողմից լայնորեն կիրառվեց մեղքը իթթիհատի ու նրա պարագլուխների վրա բարդելով՝ Թուրքիայի՝ որպես պետության, պատասխանատվության հարցը նրբորեն շրջանցելու տարբերակը: Մինչդեռ «Տեղեկագրում» ցույց է տրվում, որ հայերին կոտորելու համար նրանց նախապես ապստամբության մեջ մեղադրելով, անտեսվել է ֆրանսերեն «Resistance» («Դիմադրություն») հասկացութան մեջ ամրագրված՝ ինքն իրեն պաշտպանելու մարդկային տարրական իրավունքը:

Չմոռանանք նաև, որ այն իրացնելու խնդիրը Երկրորդ աշխարհամարտի ընթացքում գերմանական ֆաշիստների կողմից օկուպացված Ֆրանսիայում դարձավ համանուն շարժման անվանումը: Հատկանշական է, որ գիտակցելով շարունակվող պատերազմի պայմաններում Սոցիալիստական ինտերնացիոնալի փաստաթղթերում նման բաժին ներառելու հետ կապված խնդիրները, Սոցինտերնի քարտուղար Ք. Հյուիսմանսը այն դուրս է թողել «Տեղեկագրի» հրապարակման ենթակա բաժիններից: Ներկայումս փաստաթուղթն իր ամբողջության մեջ ընթերցող մասնագետի համար ակնհայտ է դառնում, որ 1915-ին արևմտահայության մղած դիմադրական մարտերը լիովին «տեղավորվում են» «ցեղասպանություն» հանցագործությունը կանխելուն ուղղված միջազգային իրավական նորմերի շրջանակներում:

Առավել ևս, որ «Տեղեկագրի» «Պատասխանատվություն» բաժնի ամփոփումը խարսխված է հենց նման իրավունքի փաստարկված հիմնավորման վրա. «**Եթէ մինչև իսկ ըմբոստներ կային հայերու մէջ, ոչ մէկ բան կ'արդարացնէ ամբողջ ազգի մը դէմ գործուած ոճիրը: Թուրքիան պարտաւոր է պատասխան տալ իր գրգռութեան զոհ դարձած մարդոց ճակատագրին մասին. ճակատագրին մասին մէկ ու կէս միլիոն տարագրեալներու, որոնք առանց ոչ մէկ ակնյայտ դիմադրութեան, ապաւինած էին կառավարութեան գթութեան. ճակատագրին մասին առնուազն մէկ միլիոն կիներու և երեխաներու, որոնք ոչ մէկ կերպով ըմբոստներ կրնային համարուիլ**»[7] (ընդգծումը մերն է -Գ. Խ.):

Եվ վերջապես՝ «Նիւթեր»-ի **Դ. բաժինը** («Յետ եղեռնեան վկայութիւններ») ներառում է հետեղեռնյան շրջանում հավաքված և 12 ենթագլուխների մեջ համախմբված փաստաթղթեր՝ ինչպես առանձին վիլայեթներում տեղի ունեցած ջարդերի, այնպես էլ դրանց իրականացման մեջ թուրքական բանակի սպաների, պաշտոնյաների, բժիշկների մասնակցության վերաբերյալ: Սրանք հիմնականում ականատեսների վկայություններ են, որոնց մի մասը հրապարակվել է պատերազմից հետո Կ. Պոլսում լույս տեսած հայկական թերթերում:

**Ամփոփելով** «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան» 12-րդ հատորում ներառված հարուստ վավերագրերի գիտաճանաչողական արժեքը գնահատող ներկա համառոտ գրախոսականը՝ չենք կարող մեր երախտագիտության խոսքը չասել «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան» բազմահատորյակի հրատարակության մեծ գործը շարունակող Երվանդ Փամբուկյանի հասցեին: Չնայած իր տարիքին՝ նա այսօր էլ հսկայածավալ աշխատանք է կատարում ՀՅ Դաշնակցության Կենտրոնական արխիվների պարունակությունը հետազոտելու և հաջորդական հատորներով լույս ընծայելու համար: Իսկ ներկա հատորով Երվանդ Փամբուկյանը լուրջ ներդրում է կատարել նաև Հայոց ցեղասպանության պատմության վավերագրերի հրապարակման գործում:

Չենք կարծում, սակայն, որ «Նիւթեր»-ի 12-րդ հատորում արդեն հրապարակվել է «Հ. Յ. Դաշնակցութեան կեդրոնական արխիվներուն մէջ պահուած նիւթերուն ամբողջութիւնը, որ ցուցակագրուած և տեղադրուած

7 Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար, ԺԲ հատոր, էջ 295:

է այլևայլ թղթածրարներու մէջ»[8]: Ցանկացած արխիվ իր «գաղտնարան-ներն» է ունենում, որոնք հաճախ ոչ թե միտումով, այլ ակամա, իսկ եր-բեմն էլ թյուրիմացաբար են առաջանում, ուստի ժամանակագրական մի շրջանի նյութերը հայտնվում են բոլորովին այլ թեմայի վերաբերող փաս-տաթղթերի շարքում:

Բայց մեր այս փոքրիկ դիտողությունը ամենևին էլ չի նսեմացնում Եր-վանդ Փամբուկյանի կողմից վերջին տարիներին կատարված տիռելի աշ-խատանքի արժեքն ու նշանակությունը: «Նիւթեր Հ Յ Դաշնակցութեան պատմութեան» հաջորդական հատորների հրատարակման միջոցով նա արդեն իր արժանի տեղն է գրավել ՀՅԴ պատմության արխիվների պահ-պանության, ամբողջացման ու հրատարակության գործի ռահվիրաների՝ **Անտոն Գոչի**, **Սիմոն Վրացյանի**, **Աբրահամ Գյուլխանդանյանի**, **Լևոն Թադևոսյանի**, **Գերասիմ Բալայանի**, **Հրաչ Տասնապետյանի** և այլ երախտավորների շարքում:

**Գևորգ Ս. Խուդինյան**
*Պատմ. գիտ. դոկտոր*

## Gevorg S. Khoudinyan – ARCHIVAL DOCUMENTS FOR THE HISTORY OF THE ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION – DASCHNAKZOUTIOUN, 12 vol., edit. Ervand Pambukyan

**Keywords -** documents, «The provisional organ «Vishap»», Hovhannes Serenkulyan, Shavarsh Misakyan, judge, Musaler, Stockholm, Rostom.

## Геворг С. Худинян – МАТЕРИАЛЫ ПО ИСТОРИИ АРФ ДАШНАКЦУТЮН, 12 том, ред. Ерванд Памбукян

**Ключевые слова** – документы, “Временный орган “Ви-шап””, Ованнес Серенкулян, Шаварш Мисакян, судья, Му-салер, Стокгольм, Ростом.

8 Նույն տեղում, էջ 6: